ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԳԱ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆԴԱՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

IHSS մատակարարողն այն անձն է, որը վճարվում է ծառայություններ տրամադրելու համար այն անձին, որը ստանում է տնային աջակցության ծառայություններ IHSS ծրագրի ներքո: Եթե ցանկանում եք IHSS մատակարարող դառնալ, դուք պետք է կատարեք ներոնշյալ բոլոր քայլերը գործընթացը սկսելու ամսաթվից 90 օրվա ընթացքում, նախքան կարող եք անդամագրվել որպես մատակարարող ու վճարումներ ստանալ IHSS ծրագրից ծառայություններ տրամադրելու համար: Այս քայլերը կարող են կատարվել ցանկացած հերթականությամբ: Եթե կարծում եք, որ ունեք քրեական ձերբակալություն և/կամ դատվածություն նախորդ տաս տարվա ժամանակահատվածում, անկախ դրա չնչին լինելու աստիճանից, դուք պետք է սկսեք գործընթացը 2-րդ քայլից, քանի որ դուք ունեք միայն 90 օր բոլոր քայլերը կատարելու համար, իսկ Կալիֆորնիայի Արդարադատության բաժինը (California Department of Justice, DOJ) կարող է երկար ժամանակ վերանայել ձեր քրեական պատմությունը ու վարչաշրջանին տրամադրել ձեր Քրեական հանցագործի արձանագրության տվյալները:

ՔԱՅԼ 1. Լրացրեք ու ստորագրեք IHSS ծրագրի Մատակարարողի անդամագրման ձևը (SOC 426) ու անձամբ բերեք այն վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ IHSS հանրային իշխանություն:

- Վարչաշրջանի IHSS գրասենյակից կամ հանրային իշխանությունից ստացեք SOC 426 ձևի մաքուր պատճենը: *Ուշադիր կարդացեք տեղեկատվությունը, նախքան սկսեք լրացնել ձևը:*
- Լրացրեք SOC 426 ձևը և ամբողջովին ու ազնվորեն պատասխանեք բոլոր հարցերին: Դուք **պետք է զեկուցեք**, եթե դատապարտվել եք որևէ հանցագործությունների համար, որոնք ձեզ թույլ չեն տա ծառայություններ տրամադրել:
- Բերեք անձը հաստատող լուսանկարով վավեր փաստաթուղթ, որը տրվել է ԱՄՆ դաշնային կամ նահանգային պետական գործակալության կամ դաշնային ճանաչում ունեցող Բնիկ ամերիկյան կամ Ալյասկայի բնիկ ցեղային կազմակերպության կողմից **ԵՎ** բնօրինակ սոցիալական ապահովության քարտը կամ փոխարինող քարտը, որը տրվել է Սոցիալական ապահովության վարչության կողմից:
- SOC 426 ձևում ձեր կողմից տրամադրված տեղեկությունները ստուգվելու են DOJ-ի քրեական կենսագրության ստուգման միջոցով:

ՔԱՅԼ 2. Մատնահետքեր հանձնեք ու անցեք քրեական պատմության ստուգում Կալիֆորնիայի Արդարադատության բաժնի կողմից:

- Վարչաշրջանի IHSS գրասենյակը կամ հանրային իշխանությունը ձեզ կտեղեկացնի՝ ինչպես մատնահետքեր հանձնել: *Մի փորձեք մատնահետքեր հանձնել առանց վարչաշրջանի ցուցումների:*
- Դուք կարող եք մատնահետքեր հանձնել որոշ ոստիկանական գործակալություններում (ոստիկանության կամ շերիֆի բաժնում) կամ որևէ կազմակերպությունում, որն առաջարկում է մատնահետքերի թվային սկանավորման (Live Scan) ծառայություններ: Վարչաշրջանի IHSS գրասենյակը կամ հանրային իշխանությունը կարող է ձեզ տալ մոտակա վայրերի ցուցակը:

- Նահանգային օրենքը պահանջում է, որ դուք վճարեք մատնահետքերի ու քրեական կենսագրության ստուգման համար: Վարձերը կարող են տարբեր լինել՝ կախված մատնահետքերի հանձնման վայրից, ու տատանվել $40-ից $90:
- Եթե կենսագրության ստուգումը հաստատում է, որ դուք **դատապարտվել եք** 1-ին կամ 2-րդ կարգի որևէ հանցագործությունների համար, խնդրում ենք կարդալ ներքոնշյալ հատվածները և հաջորդ էջը:

Եթե դուք **դատապարտվել եք կամ** կալանավորվել եք դատապարտման հետևանքով 1-ին կամ 2-րդ կարգի հանցագործության համար **վերջին 10 տարվա ընթացքում**, դուք իրավասու ՉԵՔ անդամագրվել որպես IHSS մատակարարող կամ վճարումներ ստանալ IHSS ծրագրից աջակից ծառայություններ տրամադրելու համար:

1-ին կարգի հանցագործությունները ներառում են՝ • Երեխայի սահմանված բռնություն (Քրեական օրենսգրքի (PC) մաս 273a(a), • Տարեց կամ կախյալ չափահասի հանդեպ բռնություն (PC մաս 368*), կամ • Պետական առողջապահական խնամքի կամ աջակցության ծառայությունների ծրագրի խարդախություն:	Եթե դուք դատվածություն ունեք **1-ին կարգի որևէ հանցագործությունների համար** վերջին 10 տարում, ապա դուք իրավասու ՉԵՔ մատակարարողի աշխատանքի համար: • Դուք իրավասու ՉԵՔ, նույնիսկ եթե **1-ին** կարգի հանցագործությունը հանվել է ձեր արձանագրությունից:
2-րդ կարգի հանցագործությունները ներառում են՝ • Վայրագ կամ լուրջ հանցանք, ինչպես սահմանված է PC-ի մաս 667.5(c)-ում և PC-ի մաս 1192.7(c)-ում, • Հանցանք, որի համար անձը պետք է գրանցվի որպես սեռական իրավախախտող՝ համաձայն PC-ի մաս 290(c), և • Հանցանք հանրային սոցիալական ծառայությունների ծրագրի դեմ խարդախության համար, ինչպես սահմանված է Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մասեր 10980(c)(2)-ում և 10980(g)(2)-ում: *Կարող եք վարչաշրջանի IHSS գրասենյակից կամ IHSS հանրային իշխանությունից խնդրել 2-րդ կարգի հանցագործությունների ցուցակը:*	Եթե դուք դատվածություն ունեք **2-րդ կարգի որևէ հանցագործությունների համար** վերջին 10 տարում, ապա դուք կարող եք իրավասու լինել մատակարարողի աշխատանքի համար՝ • Եթե ձեր **2-րդ կարգի** հանցագործությունը հանվել է կամ կարող է հանվել ձեր արձանագրությունից: • Եթե ստացողն անհատական հրաժարում է ներկայացնում ձեզ աշխատանքի ընդունելու համար: • Եթե ձեզ համար հաստատվել է ընդհանուր բացառությունը: *Կարդացեք ներքևի հատվածը լրացուցիչ տեղեկությունների համար:*

2-րդ կարգի հանցագործությունների հանում.

- Եթե դուք ունեք Վերականգնման վկայական կամ 2-րդ կարգի հանցագործության հանում, դուք կարող եք իրավասու դառնալ IHSS մատակարարող լինելու համար: Խնդրում ենք ներկայացնել ձեր Վերականգնման վկայականը կամ հանման մասին փաստաթղթերը ձեր լրացված SOC 426 ձևի հետ միասին:
- Եթե դուք հանցագործության հանման գործընթացի մեջ եք, դուք պետք է ավարտեք հանման գործընթացը, նախքան քրեական կենսագրության ստուգում անցնելը:

2-րդ կարգի հանցագործության համար բացառության անհատական հրաժարում.

Անհատական հրաժարումը ձեզ թույլ է տալիս ծառայություններ տրամադրել **միայն** որոշակի ստացողին, որը որոշում է ձեզ աշխատանքի ընդունել՝ չնայած ձեր քրեական դատվածության(ների):

- Ստացողը պետք է պահանջի ու վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ հանրային իշխանությանը ներկայացնի Ստացողի հայցը մատակարարողի հրաժարման համար (SOC 862) ձևը, որպեսզի ձեզ թույլ տան ծառայություններ տրամադրել:
- IHSS ստացողը, որը ցանկանում է ձեզ աշխատանքի ընդունել պետք է տեղեկացվի ձեր դատապարտման մասին, սակայն նրան կզգուշացնեն, որ դատապարտման մասին տվյալները պետք է գաղտնի պահվեն:
- Եթե դուք՝ որպես մատակարարող, միաժամանակ նաև ստացողի լիազորված ներկայացուցիչն եք, դուք **չեք** կարող ստորագրել հրաժարումը ստացողի անունից՝ ձեր հանցագործությունների համար դատապարտումից հրաժարվելու համար: Այս դեպքում հրաժարումը պետք է ստորագրվի կամ ստացողի կողմից, կամ, եթե դա հնարավոր չէ, մեկ այլ անհատ պետք է լիազորված ներկայացուցիչ նշանակվի այս հրաժարումը ստորագրելու նպատակով:

Եթե ձեր ստացողը ստորագրում է անհատական հրաժարման ձևը, որը ձեզ թույլ է տալիս աշխատել միայն իր համար, կամ եթե նա տեղափոխվում է մեկ այլ վարչաշրջան, կամ եթե դուք որոշում եք աշխատել մեկ այլ ստացողի համար, որն ապրում է այլ վարչաշրջանում, ապա դուք պետք է մեկ այլ քրեական կենսագրության ստուգում անցնեք նոր վարչաշրջանում, իսկ ստացողը, ում համար դուք աշխատում եք, պետք է լրացնի ու ներկայացնի մեկ այլ հայց անհատական հրաժարման համար նոր վարչաշրջանում:

2-րդ կարգի հանցագործության ընդհանուր բացառություն.

Այն անհատը, որն իրավասու չէ որպես մատակարարող անդամագրվելու համար՝ հիմվելով 2-րդ կարգի դատապարտման վրա, բայց որը ցանկանում է գրանցվել մատակարարողների գրանցամատյանում, պետք է դիմի բացառման հատուկ բացառության համար:

- Դիմեք ընդհանուր բացառության համար՝ լրացնելով IHSS Դիմորդ մատակարարողի ընդհանուր բացառության հայցի (SOC 863) ձևը:
- Ձեզանից կպահանջվի սատարող փաստաթղթեր ներկայացնել (օրինակ, զբաղվածության պատմություն, անձնական տեղեկանքներ և այլն) ընդհանուր բացառության ձեր հայցը զորակցելու համար:

Եթե դուք որակազրկվել եք՝ հիմվելով 1-ին ու 2-րդ կարգի դատապարտման վրա, դուք կարող եք վարչաշրջանից խնդրել ձեր Քրեական հանցագործի արձանագրության տվյալները (Criminal Offender Record Information, CORI): Խնդրում ենք նկատի առնել, որ CORI-ն կարող է օգտագործվել միայն անդամագրման այս գործընթացի համար:

Եթե կարծում եք, որ ձեր քրեական կենսագրության ստուգման տվյալները սխալ են, դուք կարող եք վիճարկել այդ տվյալները DOJ-ի արձանագրությունների վերանայման գործընթացի միջոցով:

DOJ-ի վերանայման գործընթացը ներառում է մատնահետքերի հանձնում, մշակման վարձի վճարում և DOJ-ի կայքում գտնվող հրահանգներին հետևում՝ http://ag.ca.gov/fingerprints/security.php: Եթե ձեր արձանագրության մեջ առկա են քրեական տվյալներ, ապա պատասխանի հետ կկցվի Հնարավոր անճշտության կամ թերատության հայտ (Form BCII 8706):

ՔԱՅԼ 3. Այցելեք IHSS ծրագրի մատակարարողի կողմնորոշում, որն անցկացվում է վարչաշրջանի կողմից:

- Վարչաշրջանի IHSS գրասենյակը կամ հանրային իշխանությունը ձեզ կտեղեկացնի՝ որտեղ ու երբ կարող եք մասնակցել կողմնորոշման դասընթացին:

- Կողմնորոշումը ձեզ կարևոր տեղեկություններ կտա IHSS ծրագրի մասին, ինչպես նաև կտեղեկացնի այն կանոնների ու պահանջների մասին, որոնց պետք է հետևեք որպես մատակարարող:

ՔԱՅԼ 4. Մատակարարողի կողմնորոշման դասընթացի վերջում ստորագրեք IHSS ծրագրի Մատակարարողի անդամագրման պայմանագիրը (SOC 846):

- Ստորագրելով SOC 846-ը՝ դուք ասում եք, որ հասկանում եք ու համաձայն եք IHSS ծրագրի մատակարարող լինելու կանոններին ու պահանջներին:

Դուք պետք է ձեզ մոտ պահեք ներկայացված բոլոր փաստաթղթերի պատճենները և վարչաշրջանից ստացված որևէ փաստաթղթերը ձեր գրանցումների համար:

Երբ հաջողությամբ կատարեք այս չորս (4) քայլերն ու հաստատվեք վարչաշրջանի կամ հանրային իշխանության կողմից IHSS մատակարարող դառնալու համար, ու քանի դեռ դուք ակտիվ մատակարարող եք և ձեր քրեական կենսագրության ստուգումը մաքուր է մնում, դուք իրավասու կմնաք IHSS որևէ ստացողին ծառայություններ տրամադրելու համար:

Եթե չկատարեք այս չորս (4) քայլերը մատակարարողի անդամագրման գործընթացը սկսելուց հետո 90 օրվա ընթացքում, դուք կորակազրկվեք աշխատելուց ու որպես IHSS մատակարարող վճարումներ ստանալուց, և պետք է կրկին սկսեք այս գործընթացը, որպեսզի անդամագրվեք որպես IHSS մատակարարող:

Եթե դուք որևէ հարցեր ունեք մատակարարողի անդամագրման այս պահանջների մասին, դիմեք ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ IHSS հանրային իշխանություն: